**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Մեծամոր համայնքի կարիքների համար ուղևորափոխադրման ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/133 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/133 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի ապրիլի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ.**

Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը, իսկ ժամկետի երկարաձգման առաջարկությունն էլ ներկայացվել է պայմանագրով ի սկզբանե սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ և պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ Մեծամորի համայնքապետարանի և «Վագտրանս» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/133 պայմանագրի կատարման ժամկետի երկարացման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն.** Մեծամորի համայնքապետարանի և «Վագտրանս» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/133 պայմանագրի Հավելված թիվ 1-ով սահմանված 1-ին չափաբաժնի մասով «Տեխնիկական Բնութագիր - Գնման Ժամանակացույց»-ի «Ժամկետը**» սյունակում նշված ծառայության մատուցման ժամկետը խմբագրվել և ներկայացվել է նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «…Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.05.2026 թվականը՝ ըստ Պատվիրատուի պահանջի, իսկ մինչև 30.05.2026 թվականը պահանջի բացակայության դեպքում Պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության » բառերով:

**Փոփոխության հիմնավորում.** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 56-րդ կետ, Պայմանագրի 1.1, 7.5 և 7.8 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**